ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պ-748-20.12.2023-ԳԿ-011/0

Թիվ	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածում	Առաջարկվում է գործող օրենքի 6-րդ հոդվածը թողնել անփոփոխ:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածում	Նախագծի 2-րդ հոդվածով՝ նոր խմբագրությամբ շարադրվող 7-րդ հոդվածի 2-րդ մասի անհրաժեշտությունը չկա, քանի որ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է՝ Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության շրջանակներում 1954 թ. մայիսի 14-ի «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Կոնվենցիան:		

3.	Լիլիթ Գալստյան	Նախագծի 3-րդ հոդվածում	Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է նոր էՅ), էՄ) , էՆ) և Ժա1 կետերով:		Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն Լիլիթ Գալստյան	Նախագծի 4-րդ հոդվածում	Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը վերաշարադրվել է:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածում	Օրենքի նախագծի 5-րդ հոդվածով՝ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը առաջարկում ենք խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հուշարձաններն զբոսաշրջության նպատակով օգտագործելու դեպքում զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձինք համապատասխան պայմանագրեր են կնքում սեփականատերերի հետ»:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	ՀՀ ԱԺ իրավական փորձաքննություն	Նախագծի վերնագրում	Նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ՀՀ ԱԺ Իրավական փորձաքննություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետում	Առաջարկում ենք ապահովել Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով՝ «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» օրենքի	Տվյալ հոդվածը հանվել է:	Ընդունվել է

			(այսուհետ՝ Օրենք)՝ նոր խմբագրությամբ շարադրվող 6-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի կետերի համարակալման համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:		
8.	ՀՀ ԱԺ Իրավական փորձաքննություն	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետում առաջարկում ենք «ավելացնել» բառը փոխարինել «լրացնել» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	ՀՀ ԱԺ Իրավական փորձաքննություն	Նախագծի 2-րդ հոդվածում	Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի 7-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում վերնագրից դուրս է մնացել պահպանություն բառը, մինչդեռ իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում ոչ միայն հուշարձանների օգտագործման այլեւ պահպանության կանոնների խախտման համար: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք հիմնավորել նշված փոփոխության նպատակը կամ Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ	Ընդունվել է	Ընդունվել է

			շարադրվող 7-րդ հոդվածում լրացնել նաեւ պահպանության մասին կարգավորում:		
10.	ՀՀ ԱԺ Իրավական փորձաքննություն	Նախագծի 5-րդ հոդվածում	Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվում է՝ Օրենքի 41-րդ հոդվածի վերնագրում եւ ամբողջ հոդվածում «զբոսաշրջիկություն» բառը փոխարինել «զբոսաշրջություն» բառով (առանց հոլովածեւի մասին նշում կատարելու), մինչդեռ Օրենքի 41-րդ հոդվածի վերնագրում եւ ամբողջ հոդվածում գործածվում է «զբոսաշրջիկության» եւ «զբոսաշրջիկային» բառերը, ուստի առաջարկում ենք վերախմբագրել Նախագծով կատարվող փոփոխությունը՝ նախատեսվող փոփոխության ինկորպորացումն ապահովելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
11.	ՀՀ ԱԺ Իրավական փորձաքննություն	Գործող օրենքի 44-րդ հոդվածում	Առաջարկում ենք Օրենքի 44-րդ հոդվածում «վերանորոգման» բառից հետո եւս լրացնել «, տեղափոխման, փոփոխման» բառերը եւ կետադրական նշանները:	Ընդունվել է	Ընդունվել է